ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ (ՎԱՂ.) ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.3-2) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
19.08.2014

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարան
<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետը՝
-ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,
-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.
ա) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր և զեկուցագրեր:
բ) վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները.
գ) մասնակցում է զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանը.
դ) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը
ե) աջակցում է զինծառայողների ընտանիքների, զինծառայությունից արձակվածների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը
զ) աջակցում է երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը
է) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
ա) միջնակարգ կրթություն
բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքնային գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին,
գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե) << Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
զ) մեկ լուսանկար (3x4 չափսի)
է) անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ, անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարանի շենքում (Շինարարների փողոց N47) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, (ք. Արմավիր Խ.Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:
Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարանի աշխատակազմ (գ. Բաղրամյան, Շինարարների փողոց N47 հեռ.՝ 091-04-35-35), ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ.Աբովյան 71) հեռ.՝ (0237) 2-07-70, (0237)2-76-49:
Մրցույթը կկայանա 2014թ. սեպտեմբերի 30-ին ժամը 12 ^{00}-ին՝ Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարանում:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014թ. սեպտեմբերի 4-ը:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բաղրամյան, Շինարարների թողոց N47
Հեռ.՝ /091/ 04-35-35 /093/ 75-62-26
Էլ. Փոստ՝ baxramyanhamaynq@mail.ru